
ՋՈՆ ՌՈՌԻԼՍԻ «ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ»

ԹԱՂԵՎՈՍՅԱՆ Հ. Դ.

Ջոն Ռոուլսը (1921-2002) համարվում է անգլո-ամերիկյան քաղաքական փիլիսոփայության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը: Անուրանալի է նրա վաստակը քաղաքական փիլիսոփայության և քաղաքական տեսության բնագավառներում, իսկ գլխավոր աշխատությունը՝ «Արդարության տեսությունը» (1971թ.), XX դարի քաղաքական փիլիսոփայության ամենանշանակալից իրադարձություններից էր:

«Արդարության տեսություն» աշխատության մեջ Ռոուլսը հրաժարվում է XX դարի առաջին կեսին ամերիկյան գիտական միջավայրում հաստատված ավանդույթներից, ըստ որոնց՝ հետաքրքրությունը գեղագիտական իդեալների և սկզբունքների հանդեպ չպետք է նշանակի որոշակի նախապատվությունների պաշտպանություն: Հեղինակը վերադառնում է քաղաքական իդեալի որոնմանը և իր աշխատությունում ժխտում այն պնդումը, որ արժեքներն անհնար է ուսումնասիրել խիստ և գիտականորեն հավաստի մեթոդների կիրառմամբ: Ռոուլսը կարծում է, որ կարելի է գտնել արժեքների վերլուծության համակարգված տարբերակ, և որ արդարության լավ տեսությունը համակարգված ձևով պետք է արտահայտի մեր բնագոյային արդարության զգացումը:

Ըստ Ռոուլսի՝ «Արդարությունը հասարակական ինստիտուտների գլխավոր արժանիքն է ճիշտ այնպես, ինչպես ճշմարտությունը մտավոր համակարգին է»¹: Աշխատությունում նա իր ուշադրությունը կենտրոնացնում է արդարության գլխավոր առարկայի՝ հասարակության հիմնական կառուցվածքի վրա, որի տակ նա հասկանում է առավել կարևոր սոցիալական, իրավական, քաղաքական և տնտեսական ինստիտուտների ամբողջ համակարգը (օրինակ՝ սահմանադրությունը, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, մրցակցային շուկայական տնտեսությունը, մոնոգամ ամուսնությունը): Այդ ինստիտուտները թույլ են տալիս կառուցել կարգավորվող հասարակություն²: Հասարակության հիմնական կառուցվածքի գործառույթն է տվյալ հասարակության անդամների սոցիալական համագործակցությունից բխող առավելությունների և հոգսերի (դժվարությունների) բաշխումը:

«Այստեղ առկա է ինտուիտիվ պատկերացումը, որ տվյալ կառուցվածքը ներառում է տարբեր սոցիալական վիճակներ, և տարբեր

¹ Ролз Дж. Теория справедливости, Новосибирск, 1995, с.19.

² Նույն տեղում, էջ 85:

սոցիալական դիրքեր զբաղեցնող մարդիկ կյանքից ունեն տարբեր ակնկալիքներ՝ պայմանավորված քաղաքական համակարգով, ինչպես նաև տնտեսական և սոցիալական հանգամանքներով: Այսպիսով, հասարակության ինստիտուտներն առաջացնում են հասարակության որոշ անդամների առավելություններ մյուսների նկատմամբ՝ հաշվի առնելով ելակետային դիրքերը: Հետևաբար առաջանում է խոր անհավասարություն, որը վերաբերում է բոլոր ոլորտներին և շոշափում մարդու կենսական հնարավորությունները: Հասարակության հիմնական կառուցվածքի այս անհավասարության նկատմամբ հենց առաջին հերթին պետք է կիրառվեն սոցիալական արդարության սկզբունքները»³: Այդ դեպքում արդարության գլխավոր խնդիրը կլինի այն սկզբունքների որոշակի խմբի ձևավորումը և օրինականացումը, որոնց պետք է համապատասխանի հասարակության արդարացի հիմնական կառուցվածքը:

Ըստ Ռոուլսի՝ արդարության խնդիրները հայտնվում են օրակարգում, երբ առաջանում է համապատասխան ինստիտուտների գործողության հասարակական գնահատականի անհրաժեշտություն, որպեսզի հավասարակշռվեն հասարակության անդամների օրինակորեն մրցակցող շահերը և հավակնությունները: Ընդ որում, Ռոուլսը չի դիտարկում պետության քաղաքացիներին՝ որպես ուտոպիստական իդեալի ձգտող բարոյախոսների: Նրանք ավելի շուտ բանական եսապաշտներ են, որոնք կենտրոնացած են սեփական շահերի և նպատակների վրա: Եվ քանի որ կա շահերի մրցակցություն, ապա անհրաժեշտ է կիրառել որոշակի կարգ, ըստ որի՝ օրինապահի հավակնություններ ունեցող մարդը կհամաձայնվի, որ սահմանվեն արդարացի ինստիտուտներ և պրակտիկա:

Այստեղ ծնվում է «Արդարությունը՝ որպես ազնվություն» գաղափարը, որի հիմքում ընկած է «ելակետային դիրքում» ազնվության հայեցակարգը, որը վերաձվում է արդարության սկզբունքների: Դրանց կիրառումը հասարակության իրական ինստիտուտներում պետք է ազնիվ գործարքի հետևանք լինի և հանգեցնի արդարացի արդյունքների: Ռոուլսը իր սկզբունքն անվանում էր ընթացակարգային արդարություն: Այդ ընթացակարգի մշակման համար նա դիմում է «հասարակական պայմանագրի» տեսությանը:

«Հասարակական պայմանագրի» ռոուլսյան վարկածը հիպոթետիկ ընտրության իրավիճակն է, որը Ռոուլսն անվանել է «ելակետային դիրք»⁴: Նրա համոզմամբ՝ հասարակական պայմանագիրը համարժեք մոդել է արդարության սկզբունքների դրսևորման համար, քանի որ

³ Rawls J. A Theory of Justice, London, 1971, p. 7.

⁴ Ролз Дж., *նշվ. աշխ.*, էջ 30-34:

համաձայնության ազնվությունը ապահովվում է նրանով, որ մասնակիցները համաձայն են այն սկզբունքներին, որոնց իրենք պետք է ենթարկվեն հետագայում: Այդ պատճառով Ռոուլսը իր տեսությունն անվանել է «Արդարությունը՝ որպես ազնվություն»: Այս տեսության հիմնական գաղափարն այն է, որ արդարությունը հանդիսանում է համաձայնության օբյեկտ: Նրանք, ովքեր մասնակցում են սոցիալական համագործակցությանը, համատեղ գործողությամբ միասնականորեն կրնտրեն սկզբունքներ, որոնք կներառեն հիմնական իրավունքներն ու պարտականությունները և կորոշեն սոցիալական բարիքների բաշխումը: Կնքելով «հասարակական պայմանագիրը»՝ մարդկանց խումբը պետք է մեկընդմիջտ որոշի՝ այդ պայմանագրում ինչն է արդարացի և ինչը՝ անարդարացի: Սկզբունքները, որոնք կընդունվեն, պետք է կառավարեն հետագա ինստիտուտների բարեփոխումները:

Մակայն Ռոուլսի համար հասարակական պայմանագիրը ոչ թե իրական պատմական, այլ ենթադրյալ պայմանագիր է: Նրա առկայությունը կախված է ոչ այնքան պայմանավորվածության էությունից, որքան այն գաղափարից, որ պահանջվելիք հիպոթետիկ պայմաններում կարող է կնքվել պայմանագիր: Այդ տեսակետից այս տեսությունը, Մենդելի կարծիքով, «կրկնակի ենթադրյալ»⁵:

Ռոուլսը առաջարկում է անցկացնել մտավոր փորձ. պատկերացնել որ մի քանի բանական անհատներ պայմանագիր են կնքում արդարության սկզբունքների վրա հիմնված հասարակության կազմակերպման վերաբերյալ: Պայմանագրի մասնակիցներն անհատներ են, նույն սերնդի մարդիկ, որոնք ունեն ընտանեկան ամուր կապվածություն և մտահոգված են իրենց մտերիմների և սերունդների ապագայի համար: Ելակետային դիրքում որոշվում է հասարակության հիմնական կառուցվածքը՝ քաղաքական սահմանադրությունը, օրինականորեն ճանաչված սեփականության ձևերը, տնտեսության կազմակերպումը և այլն: Ելակետային դիրքի հավասարությունը առաջին հերթին վերաբերում է ազատությանը, ապա նաև ընթացակարգային իրավունքներին. հասարակական պայմանագրի բոլոր մասնակիցները հավասարազոր են:

Արդարության սկզբունքները ձևակերպվելու համար անհրաժեշտ է պատկերացնել մարդկանց, որոնք չունեն կարևոր և բազմակողմանի տեղեկություններ իրենց իսկ մասին: Այսինքն՝ ի հայտ է գալիս որոշակի «անտեղյակության շղարշ», որը բացառում է մարդկանց տեղեկացվածությունն իրենց սոցիալական դասի պատկանելության, իրենց պաշտոնի, մասնագիտության, տաղանդի, ֆիզիկական ուժի, առողջության, ներկա դասակարգի բնույթի և բարիքի անհատական

⁵ Sandel M. *Liberalism and the Limits of Justice*, Cambridge, 1989, p. 105.

հայեցակարգի վերաբերյալ, որն էլ իր հերթին կբացառի որևէ հատուկ շահերի պաշտպանություն և ներքին պայմանավորվածություն ի վնաս փոքրամասնության: Պայմանագրի մասնակիցները պետք է մեկուսացված լինեն տեղեկատվության հոսքից, բացառությամբ բանական կողմնորոշման համար խիստ անհրաժեշտ տեղեկատվության: Բացի այդ, մարդիկ չեն կարող առաջնորդվել իրենց կանխապես հայտնի արդարության սկզբունքներով: «Անտեղյակության շղարշը» այս իրավիճակում դառնում է յուրատեսակ բանալի, որը թույլ է տալիս հասկանալ, թե ինչ է տեղի ունենում ելակետային դիրքում:

Ըստ ռոուլյան մեկնաբանության՝ պայմանագիր կնքող մարդիկ ունեն երկու հիմնական հատկություններ՝ արդարության զգացում և բարիքի հայեցակարգի ձևակերպման ընդունակություն: Բացի այդ, կողմերը պետք է գիտակցեն, որ յուրաքանչյուր բանական էակ կձգտի ունենալ այսպես կոչված առաջնային սոցիալական բարիքներ, առանց որոնց՝ ազատության իրականացումն անհիմաստ է:

Պայմանագրի մասնակիցները պատկերացում ունեն որոշակի առաջնային բարիքների մասին: Դրանք են հիմնարար ազատությունները՝ խոսքի, խղճի, միավորումների ազատությունը, տեղաշարժման և մասնագիտության ընտրության, ինչպես նաև սոցիալական դերի ազատությունը, իշխանությունը, պաշտոնը և դիրքը հասարակության մեջ և դրա հետ կապված պատասխանատվությունը, եկամուտները և բարեկեցությունը, սեփական եսի նկատմամբ հարգանքի սոցիալական հիմքերը:

«Անտեղյակության շղարշը» ապահովում է անաչառության և անանունության պայմաններ պայմանագիրը կնքելու ընթացքում, իսկ առաջնային բարիքներն ստեղծում են շարժառիթի նվազագույն մակարդակ, որն անհրաժեշտ է բանական ընտրության գործընթացի սկզբի համար: Այդ երկու նախապայմանները ապահովում են պայմանագրի մասնակիցների գործունեությունը բոլոր բանական անհատների շահերի օգտին:

Պետք է նշել, որ «անտեղյակության շղարշն» ընկած է արդարացի ինստիտուտների բյուրեղացման գործընթացի 4 փուլերի հիմքում: Այս փուլերից յուրաքանչյուրի ընթացքում «անտեղյակության շղարշը» հետզհետե բարձրանում է, որի շնորհիվ ենթադրյալ պայմանագրի մասնակիցներն ստանում են ավելի լիարժեք գիտելիքներ հասարակության և սեփական անձի վերաբերյալ, իսկ վերջին՝ 4-րդ փուլում, շղարշն ամբողջությամբ վերանում է:

Առաջին փուլում Ռոուլսը ներկայացնում է ելակետային դիրքի հասկացությունը: Այս փուլում ընտրվում են արդարության հիմնական սկզբունքները: Համաձայն նրա արդարության ընդհանուր հայեցակարգի՝

«Բոլոր առաջնային հասարակական բարիքները՝ ազատությունը և հնարավորությունները, շահույթը և հարստությունը, ինչպես նաև սեփական «ես»-ի նկատմամբ հարգանքը պետք է բաշխվեն հավասար, եթե, իհարկե, դրանց անհավասար բաշխումը չի բխում հասարակության առավել անբարենպաստ իրավիճակում գտնվող խավի շահերից»: Հետագայում այս հայեցակարգից բխեցվում են արդարության երկու հիմնական սկզբունքները. 1) բոլոր անձինք ունեն հավասար հիմնարար ազատություններ, որոնք համաչափ պետք է լինեն այլ անձանց համանման ազատություններին (ազատության սկզբունք). 2) սոցիալական և տնտեսական անհավասարությունը պետք է կարգավորվի այնպես, որ՝ ա) այն ուղղված լինի ամենանբարենպաստ իրավիճակում գտնվող անձանց առավելագույն շահերին, բ) հնարավորությունների հավասարության ազնվորեն պահպանման պայմաններում ինստիտուտները և հասարակական դիրքը մատչելի լինեն բոլորի համար՝ (տարբերակվածության սկզբունք)⁶: Այս երկու սկզբունքները Ռոուլսը կանխամտածված է դասավորել որոշակի հիերարխիկ հաջորդականությամբ, որը կհամապատասխանի բարոյական փիլիսոփայության ավանդույթներին: Դա նշանակում է, որ տվյալ սկզբունքը չի սկսում գործել, քանի դեռ իրագործված չէ նախորդը:

Հետագոտողի գլխավոր նպատակն է ապացուցել, որ իր սկզբունքները ոչ թե դատարկ վերացարկում են, այլ գործող հիպոթեզ, և դրանց հիմամբ լիովին հնարավոր է ստեղծել հասարակության հիմնական կառուցվածքի գործող ինստիտուտներ:

Արդարության հիմնական սկզբունքներն ընտրելուց հետո սկսվում է երկրորդ փուլը՝ արդարացի քաղաքական սահմանադրության ստեղծումը, որը կամրապնդի մարդկանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները: «Առանց այս ազատությունների և իրավունքների իրացման այն քաղաքական համակարգը, որը ես պատկերացնում եմ որպես սահմանադրական ժողովրդավարության որոշակի տարատեսակ, չէր կարող համարվել արդար ընթացակարգի հետևանք» - նշում է Ռոուլսը⁷:

Արդարացի քաղաքական սահմանադրությունը սահմանափակում է կառավարության իշխանությունը, բայց բավականաչափ իրավասություններ է տալիս վերջինիս օրենքը պահպանելու համար⁸:

Երրորդ փուլում դիտարկվում են արդարացի օրենքները, և հիմնադրվում են տնտեսական և սոցիալական քաղաքականության մեխա-

⁶ Rawls J., նշվ. աշխ., էջ 302:

⁷ Ролз Дж., նշվ. աշխ., էջ 179:

⁸ Кашиников Б. Н. Либеральные теории справедливости и политическая практика России, Великий Новгород, 2004, с. 85.

նիզմները: Այս փուլում անհատներն ընտրում են բարեկեցիկ պետության հիմնական տնտեսական և սոցիալական կազմավորումները: Պետությունն ապահովում է մրցակցության հավասար պայմաններ: Այն կանխում է մոնոպոլիաների առաջացումը և ապահովում նվազագույն սոցիալական պայմաններ բոլորի համար:

Եվ վերջապես չորրորդ փուլում, երբ «անտեղյակության շղարշը» բացարձակապես վերանում է, դիտարկվում են ֆորմալ արդարության խնդիրները՝ դատավորների և պաշտոնյաների կողմից արդարացի օրենքների և կանոնների անաչառ կիրառման վերաբերյալ⁹:

Անփոփեղով վերոգրյալը՝ պետք է նշել որ, «Արդարության տեսությունն» աշխատության մեջ Ռոուլսը նպատակ ունի սահմանելու արդարության այնպիսի սկզբունքներ, որոնք կառանձանային իրենց բազմակողմանիությամբ և համընդհանրությամբ: Հիմք ընդունելով ազնվության և անհատի իրավունքների ու ազատությունների սկզբունքները՝ նա մեթոդաբանական վերլուծության միջոցով հիմնավորում է իր «արդարության տեսությունը»:

Հարկ է նաև նշել, որ Ռոուլսի տեսության որոշ դրույթներ դարձել են մի շարք տեսաբանների և հետազոտողների քննադատության թիրախ: Մասնավորապես՝ ամերիկացի փիլիսոփա և քաղաքագետ Ռոնալդ Դվորկինը, անդրադառնալով Ռոուլսի ենթադրյալ պայմանագրին, նշում է, որ այն «ոչ թե պայմանագրի թույլ ձև է, այլ ընդհանրապես պայմանագիր չէ»¹⁰: Մեկնաբանելով «Արդարության տեսությունը» Տատյանա Ալեքսեևան գրում է. «Ռոուլսյան տեսակետի շատ տեսանկյուններ ունեն որոշակի թույլ կողմեր: Օրինակ՝ ինչո՞ւ է Ռոուլսը վստահ, որ մարդիկ կընտրեն լուծման առավել հանգիստ տարբերակը՝ ելնելով այն բանից, որ նրանք կվախենան լինել աղքատ իրական աշխարհում: Բայց չէ՞ որ մարդկային էությունն ունենում է նաև ռիսկի դիմելու հակումներ»¹¹:

Ելնելով վերոշարադրյալից՝ հարկ ենք համարում նշել, որ ժամանակակից հասարակությունների համար Ռոուլսի «Արդարության տեսությունը» առավել ընդունելի և գործնականում իրագործելի տեսությունն է: Թեև նշված քննադատություններում առկա է ռացիոնալ հատիկ, այնուամենայնիվ, կարծում ենք, անհնար է գերազնահատել Ռոուլսի «Արդարության տեսությունը» աշխատությունը արդարության փնտրտուքի ճանապարհին: Ի վերջո այս տեսությունում առաջ քաշվող արդարության երկու սկզբունքների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ «Արդարության տեսությունը», ի տարբերություն

⁹ Ролз Дж., նշվ. աշխ., էջ 127.

¹⁰ Dworkin R. *Taking Rights Seriously*, Harvard, 1971, p. 151.

¹¹ Алексеева Т. *Справедливость как политическая концепция*, М., 2001, с. 86.

ուտիլիտարիզմի և մի շարք այլ տեսությունների, պաշտպանում է այն կարևորագույն գաղափարը, որին միանշանակ համաձայն ենք նաև մենք. ըստ այդմ՝ հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք պետք է հավասար լինեն բոլորի համար, ոչ մի պարագայում չպետք է զոհաբերվեն ի նպաստ հասարակության որևիցե տնտեսական և սոցիալական ձեռքբերման: Այս թեզիսը նաև կարևոր երաշխիք է պետական իշխանությունում ավտորիտարիզմի և ամբողջատիրության կանխման համար:

"ТЕОРИЯ СПРАВЕДЛИВОСТИ" ДЖОНА РОЛЗА

ТАДЕВОСЯН А. Д.

Резюме

Американским философом Джоном Ролзом были разработаны два принципа справедливости, которые, на его взгляд, должны составлять одну из основ государства и способствовать защите прав и свобод граждан.

Не менее интересна и его теория создания государства, включающая в себя четыре стадии становления государства как такового.

"A THEORY OF JUSTICE" BY JOHN RAWLS

H. TADEVOSYAN

Abstract

American philosopher John Rawls has developed two principles of justice, which in his opinion make up one of the basis of the state and favour the defense of rights and liberties of the citizens.

Of no less interest is his theory of creating a state, including four stages of formation per se.